

պիտի կախված լինի, և այլն: Նշանակման խոս-
տույթներ տեղի ունեցան նաև հրապարակորէն՝
սրբազանի կազմած ծխականների անդրանիկ
ժողովի ժամանակ: Այդ օրից, սակայն, մինչև
օրս չարաթիւներ, ամիսներ զլորվեցին մենք ոչ
խոստում իրագործած տեսանք և ոչ դարձ ձեռ-
նարկած... Նոյն իսկ քահանայական շտաբոված
հարցը, որ իր անորոշութեամբ չարունակ ինտ-
րիզաներ է ծնում և երկպառակութիւններ յա-
րուցանում, դատաւարութեամբ է դարձնում անորո-
շութեան, միութեան: Այս հարցը—որ ամենից
առաջ պիտի լուծվէր—ոչ միայն չէ լուծված,
այլ հասցրված է մի «կասկածելի» դրութեան:

Միայնակների, հասարակութեան «անբու-
ճարելի» իրաւունքը յարգող ձեռքող եպիսկո-
պոսը, մոռանալով մօտիկ անցեալում իր ասած-
ները—ժողովում, ծխականների ներկայութեամբ
իր տուած խոստումները քահանայացուներ ընտ-
րելու, քահանաներ հրաւիրելու վերաբերեալ—
«տանանց տանել», քահանաներ խորհրդակցու-
թեանը որոշել է Բագրու ինն ծխի վերածել,
ուրիշ խօսքով՝ ունենալ ինն քահանայ, որոնցից
մէկը պիտի հովուէ բաղնիքայիններին, միւսը Սև
քաղաքայիններին, իսկ մնացեալ եօթը՝ քաղաքա-
ցիներին: Քաղաքի եօթ քահանաներից իւրա-
քանչիւրին ընկնում է մասաւորապէս 300 ծուխ:
Ստիպան այս չէ գլխաւորը. գլխաւորն այն է,
որ այդ որոշման համաձայն այժմ բաց է մնում
3 քահանայի տեղը: Այդ տեղերը լրացնելու հա-
մար, ինչպէս լսվում է, սրբազանը մտադիր է
«ժամանակակիցութեան» հրաւիրել Ղարաբաղի
գիւղերից շատնօթ և բարեկամ քահանաներ
հովուելու համար... Որքան մոռացկոտ էլ լինի
սրբազանը, այնուամենայնիւ հաւատալ չենք կա-
րողանում, որ նա այդ աստիճան հակասութիւն-
ներ թող տալ իրան: Գեա չը խորհրդակցած
ծխականների հետ, չը լսած նրանց կարծիքը
ինն ծխական քահանաներ ունենալու մասին, չը
հարցրած նրանց կամքը, չը հետաքրքրված նը-
րանց թեկնածուներով՝ կարգադրութիւններ անել,
որոշումներ կայացնել և ի լրումն այդ բոլորի՝
տգէտ մարդիկ հրաւիրել ծխականների շնքին
վաթմակելու համար՝ այդ աւնուազն անտախտու-
թիւն է, եթէ ոչ պարտադրութիւն...

Միամիտ պիտի լինել չը հասկանալու հա-
մար, թէ ինչ է նշանակում «ժամանակակիցութեան»
հովուելու համար հրաւիրել. բազմոցները վարձ-
ված են զբանում: «ժամանակակիցութեան» նշանակ-
վածներից մի երկուսի դառը պատուհները ակա-
մայ վաշելում են մինչև այսօր իսկ: Բաւական
է, որ հոգեւոր հայրերը ոտ են կոխում Բագրու:
Մի քիչ մնալով, «առատ» տուրքի ձաշանի առ-
նելով, նրանք այլ եւ ոչ մի միջոց չեն ինա-
յում «մշտական» դառնալու համար: Նրանք,
այդ հովուելու կոչվածները եւ՝ աղերսագրեր են
յորդիւնում, եւ՝ աղանաւորներ խոստանում, եւ՝
չորհրդորթում, աղաչում, պաղատում, ծածուկ
ստորագրութիւններ ժողովում և այլն և այլն...
Վերջապէս յաջողեցնում են և մնում: Ուրիշ
կերպ էլ ներկայ հանգամանքներում չէ կարող
լինել: Հոգեւորականներ համար տեղական ծխա-
կան քահանաների ստացած տարեկան 3000—
5000 ռուբլի եկամուտը աւելի քան զայնակղե-
ցուցիչ է թիւքա: Եւ Արդ, աչքի առաջ ունենալով
անցեալի օրինակները և քահանայական խնդրի
«առատաւոր» հանգամանքները, պարտք ենք
համարում օր առաջ հրաւիրել նախ ծխականնե-
րի և ապա երջցիւնս պ. Հ. Մելիքեանի լուրջ
ուշադրութիւնը այս «առաջնական» հանգաման-
քի վրա:

Ն. Գաթեան

ՆՆՈՒՄՆԻՆ ԼՈՒՐՆԵՐ

«Մշակիչ» այս համարը բաղկացած է 6 երեսից:

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Ներ-
սիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ուղարկել
էր Վեհափառ Կաթողիկոսին զպրօքի եօթերորդ
դատարանի ծրագիրը և խնդրել թողնուածին
բանալու այդ դատարանը առաջիկայ սեպտեմ-
բերից: Այժմ տեղեկանում ենք, որ Կաթողիկո-
սի դիւանը յայտնել է Ներսիսեան դպրոցի հո-
գաբարձութեան, թէ Վեհափառ Կաթողիկոսը
համարում է եօթերորդ դատարանի բացումը
վաղաժամ, որովհետեւ թեմական դպրոցների ծը-
րագիրը առաջարկված է պատշաճաւոր իշխա-

նութեան հաստատութեան, որը ստանալուց յե-
տոյ կարող է վճարել և ներկայ խնդիրը:

Հինգշաբթի, յունիսի 27-ին և ոչ յունիսի
20-ին, ինչպէս հաղորդել էինք, կայացաւ քաղա-
քային գործերի նահանգական ատենանի նիստը,
թիֆլիսի պ. նահանգապետի նախագահութեամբ,
քաղաքային ընտրութիւնների դէմ տուած բու-
ղոքները քննելու համար: Ժողովին, բացի նա-
հանգապետից, մասնակցում էին իւրեւ անդամ-
ներ թիֆլիսի փոխ-նահանգապետ Ստեփանովիչ,
կոնստանդնուպոլսի պաշտօնի կառավարիչ Վերնիցկիյով,
քաղաքապետի պաշտօնակատար Իվանենկօ և գու-
մայի ձայնաւոր Գ. Եւանգելով: Ատենանք քնն-
նելով բոլոր զանգամանքները մայիսի 18-ին և յու-
նիսի 1-ին կատարված ձայնաւորների ընտրու-
թեան դէմ, գտաւ որ ոչ մի անկանոնութիւն
տեղի չէ ունեցել ընտրութիւնների ժամանակ և
բոլոր մասնակցողները օրինաւոր կերպով են
մասնակցել, ուստի և որչափ բոլոր ձայններով
ընդդէմ մէկի անհետեանք թողել այդ գնահատ-
ները: Ուրեմն, սեպտեմբերից սկսած Գուման կը
գործի առդէն նոր կազմութեամբ:

Մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են
տալիս, որ Լազարեան ձեւարանի վերադառնալի
պաշտօնին թեկնածու է նկատվում Մօսկովայի
համալսարանի պրօֆէսօր Գամբարով, իսկ տեա-
չական պաշտօնին թեկնածու՝ Գ. Խալաթեան:

Ինչպէս յայտնի է, Ռուսաստանի մի քանի
նահանգներում օդի մեղմալճառութիւն է մըտ-
ցրված, այսինքն զանաւորներ ինքն է ծախում
օդին և որդեկում է մասնաւոր օդեկաճառու-
թիւնը: Գրա համար նշանակվում են առանձին
պաշտօնեաներ: Սակայն այժմ յայտնվում է, որ
օդի մեղմալճառութիւնը ազդում է ժողովրդա-
կան լուսաւորութեան գործի վրա, որովհետեւ
ժողովրդական դպրոցների բազմաթիւ ուսուցիչ-
ները թողնում են իրանց պաշտօնը և մտնում
ակցիդի ծառայութեան մէջ և այդպիսով ուսու-
ցիչները պակասութիւն է դրացվում:

Ժողովրդական լուսաւորութեան միջոցառու-
թիւնը բացատրել է, որ ժողովրդական դպրոց-
ների շինութիւնների մէջ չէ կարելի թող տալ
ներկայացուցիչներ տալը, ի նկատի ունենալով,
որ ժողովրդական դպրոցի կրօնական և բարոյա-
կան ոգուն չէ համապատասխանում այդ տեսակ
զուարճութիւն:

Ինչպէս երևում է, հանգուցեալ Գեորգ Բա-
նանեանի թողած խոսքը կարողութեան լու-
րը տարածված է եղել և Մօսկովայում Այդ
քաղաքում հրատարակվող «Новости Дня» թեր-
թիւն ահա ինչ ենք կարդում: «Մի քանի օր ա-
ռաջ մենք տպեցինք մի լուր, թէ Լազարեան
ձեւարանի տեսուչ Գ. Խ. Բանանեանից յետոյ
մնացել է խոսքը կարողութիւն: Այժմ, հաստատ
աղբիւրից մեր ստացած տեղեկութիւններին
նայելով, այդ լուրն անհիմն է»:

«КАВКАЗЪ» լրագրում տրված է Նուխու գա-
ւառապետ Ասանիճէի հետեւեալ հեռագիրը, յու-
նիսի 25-ից. «Եթէ, երբ Գեօկչայի աւաղակնե-
րի խումբը Նուխու գաւառն էր ներս խուժում,
յայտնի Արշուր-Քերիմ-բէկի առաջնորդութեամբ,
Ղալաւուսի տանուտէրին աջակցում է սղանել
խմբի աւաղակապետին և ձերբակալել աւաղակ-
ներից մէկին: Աւաղակների հալածումը չարու-
նակվում է»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Թէև մենք սպա-
սում էինք, որ մեր նոր դուռնի կը հանի քա-
ղաքը իր ընկած նահանգականութեան վիճակից, բայց
մինչև այսօր ոչ մի փոփոխութիւն չէ զգացվում:
Ամենքին յայտնի է, որ ձայնաւորների ընտրու-
թեան ժամանակ ամեն տեսակ միջոցներ գործ
դրվեցին. խնամութիւն, լապիս, հիւրասիրու-
թիւն և այլն անպակաս էին այդ ժամանակ և
ընտրված ձայնաւորներին մեծամասնութիւնը համ-
փանքել եղան, որոնք և ընտրեցին իրանց պատ-
շաճ քաղաքագլուխ: Նոր վարչութեան կազմու-
թիւնը առիթ է տալիս մեզ կարծելու, որ նոր բան
ստացելը ցնորք է և մեր քաղաքը դեռ երկար
տարիներ պէտք է նախկին ընկած դրութեան
մէջ մնայ»:

ԱՐՄԱՒԻՐԻՅ մեզ գրում են. «Երկու տարի է
ինչ Արմաւիրում կառուցել են մի հոյակապ շի-
նութիւն օրիորդաց եկեղեցական երկգոթեան
զպրօքի համար: Շինութիւնը կանգնել է մօտ 25
հազար ռ. և 2—3000 ռ. էլ դեռ պէտք է ծախ-
սել. որպէս զի նա միանգամայն պատրաստ չի-
նի: Որքան ուրախ էր երկու տարի առաջ
տեսնել արմաւիրցիների եռանդն այս գործում,
նոյնքան ցաւալի է նկատել այժմ նրանց ան-
տարբերութիւնը: Շինութեան յանձնաժողովը
խորը քննի մէջ է ընկնում: Նա իր գործը կամ
կատարած է համարում, կամ մոլորված՝ դժուա-
րանում է այդ շինի գումարը ձեռք բերելու:
Արդեօք լաւ չէր լինի, որ գտնէ հոգեւոր իշխա-
նութիւնը թող տար երկու եկեղեցիների զբա-
մաղխից վերցնել 3000 ռ. և շինութիւնն ա-
ւարակել: Թող լաւ իմանան, որ զպրօքի ընդար-
ձակ դահլիճը ներկայացուցիչների, կոնցրետների
և այլ հանդէսների համար վարձու տալով՝ կա-
րելի է կարճ ժամանակամիջոցում ծախսած փո-
ղը յետ ստանալ»:

Բօլշարիայի ԲՈՒՇՈՒՅ քաղաքից մեզ գրում
են յունիսի 18-ից. «Տեղացած անընդհատ անձ-
րեւերի պատճառով ամբողջ Բուլշարիան ու-
րումանիան ողորման մէջ է: Շատ մը քաղաք-
ներում մէջ ջուրը այն աստիճան բարձրացած է,
որ ամբողջ աներ ու խանութներ ջուրի մէջ
մնացած են. մասնաւորաբար Բուլշարիայ մէջ
Բրաւաթի, Բալկրատ և Վիտին քաղաքները այն
աստիճանի հասած են, որ անկարելի է քաղաքի
մէջ պտտել: Շատ քաղաքներում մէջ ջուրը նոյն
իսկ տանիքներում վրա հասած է, ու բնակիչնե-
րը ամբողջ քաղաքներից դուրս փախնում են. ա-
մենէ աւելի ցաւալին այս է, որ ջուրը յանկար-
ծակի հասած է, այնպէս որ իրանց տան մէջ
գտնվող բոլոր առարկաները ջուրի մէջ սկսած
են լողալ: Լօմ գետի վրա գտնվող բոլոր ջրա-
ղացները կեցած են ջուրի առատութեան, այդ
պատճառաւ մի պարկ արկի զինը, որ առաջ
12 ֆրանկ կարժէր, այժմ կարժէ 20 ֆրանկ:
Բոյսերն եւ շատ միտակցան անձրեւներէ: Կա-
ռավարութիւնը մի շաբաթ առաջ տեղացիին բոյ-
սերու դուրս ուղարկվելը բոլորովին արգելեց:
Բուլշարիայ մէջ ընդհանուր միտա կը հաչեն
100 միլիօն ֆրանկ»:

ՍՂՆԱՒԻՅ մեզ գրում են. «Գերասիմ Վրայր
և օր. Ֆելեկեաններ այստեղ եկան, և յունիսի
22-ին, սիրողների մասնակցութեամբ, ներկա-
յացրին» «Տիկինը ննջում է», «Պօպարզօնի
պանդուկը» և «Միկիկ» վճռվելները: Չը նայե-
լով, որ մի քանի տեղերում վաղերը և արտերը
կարկիտից միտա կրեցին, բայց այս տարի, ընդ-
հանրապէս, Սղնաւի գաւառը լաւ բերք է խոս-
տանում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսի լրագիրների մէջ կարդում ենք, «Պե-
տական Նշանակման» Գանձաւորութեան հայ
կարօտելոց բաշխուելու համար, առ այժմ
65.000 դրուչի գումար մը զրկած ըլլալով ի
Պատրիարքարան, այս առիթով Որբոց առժամա-
նակեայ խնամակալութեան տեղ՝ Ս. Պատրիարք
Հօր նախագահութեան ներքեւ կարօտելոց և Ու-
րոց մնացուն Գանձաւորութեան մը կազմուցեալ, ու-
րուն անդամ ընտրուեցան Վահրամ Եպիսկոպոս
Մանկունի, Գեորգ Ծ. Վ. Երէցեան և Տեառն
Գրիգոր Խաթան, Միհրան Ալիեան, Սահակ Ղա-
ղարեան, Սարգիս Թաշճեան և Մանուկ Ար-
զեան»:

«Միսիսիան» ընդարձակել են իրենց խաբեր-
դի Որբանոցն, որ մինչև 300 օրը պիտի ըն-
դունին խնամակալութեան զլուին է գերմանա-
ցի վեր. Հէրր Կլմարն»:

«Անգլուի» մը, Ուր. Բաք, Պօլսի եկած է բարե-
գործութեան նպատակաւ: Մտադիր է իր հաչ-
ւոյն Որբանոց մը հիմնել ի Կիւրդս կամ ի
Մէրսին, կամ ծովեզերեայ ուրիշ քաղաք մը,
ուր կարենայ տարին զէժ երկու անգամ այցե-
լել»:

Ռուսաց կիսապաշտօնական «Nord» լրագիրը
գրում է. «Յօդութիւնը հայտնութեան վե-
րաբերեալ բանակցութիւնները, որոնք տեղի

ունեն Կ. Պօլսում, բուրբուլին յետ չեն մղել
Թիւրքիայում ընթացող մտցնելու հարցը, ինչ-
պէս զանգատելով են Լօնդօնում: Մեզ, ընդհա-
կանապէս, յայտնի է, որ այդ հարցը մեծ պե-
տութիւնների Կ. Պօլսի գեապանների մէջ ման-
րաման բանակցութիւնների նիւթ է դառնել:
Հայտնութիւնը կնքուելու պէս, Բ. Գրան կառա-
ջարկվի ընթացողների մի ընդարձակ ծրագիր, որ
վերաբերվում է օսմանեան պետութեան քրիս-
տոնեայ նահանգներին»:

«Труд», «Историкъ» լրագիրը հաղորդում է, որ
Կ. Պօլսի հայոց պատրիարք Օրմանեան մտադիր
է հրաժարական տալ իր պաշտօնից, ի նկատի
ունենալով, որ իր առաջարկութիւնները՝ հայերի
վիճակը բարելոցելու մասին՝ չեն կատարվում:
Լուրեր են պատում, որ Փոքր-Ասիայի Միլլաթի
նահանգում նոր խառնութիւններ են տեղի ու-
նեցել»:

ԼԵՂՈՒՆԵՐԻ ՀԱՐՅՈՒ ԱՆՍՏՐԻԱՅՈՒՄ

Աւստրիական բուրժուականները դրողված են
Աւստրիայից դաշնակցական պետութիւն կազմե-
լու հնարաւորութեան հարցով: «Կան աշխոյիսի
պետութիւններ, դրում է «Frank, Zeitung» լրա-
գիրը, որ լեզուների զանապաշտութիւնը ազգե-
րի անջատման պատճառ չէ դառնում. վերջ-
ները Շվեյցարիան, ուր երեք լեզուների հարցը
լուծված է արդարացի կերպով և բոլոր երեք
լեզուներն եւ հաւասար իրաւունքներ են վայե-
լում: Աւստրիայում եւս բնական է ցանկանալ,
որ զատ զատ լեզուները հաւասար իրաւունքներ
ունենան: Դաշնակցական Աւստրիան չորս խմբի
կը բաժանվի.—բունդ-գերմանական, չէկի գերմա-
նական, լեհա-ուկրաինական և վերջապէս գերմա-
նա-սլովենա խոսակցական խումբը: Բնդհանուր պե-
տական գործերի վարչութիւնը, արտաքին բա-
ղաբանութիւնը, արդարադատութիւնը, ֆի-
նանսները, զօրքը և այլն պէտք է կենտրոնա-
նան մէկ տեղ, իսկ կրթութիւնը, գիւղատնտե-
սութիւնը և այն ամենը, ինչ վերաբերում է
բացառապէս մի առանձին տեղին, պէտք է
գտնվի առանձին նահանգների ձեռքում: «Նիւթ»,
վերջացնում է «Frank, Zeitung» իր յօդուածը,
մի քանի պետութիւնների մէջ հնարաւոր է
դաշնակցութիւնը, նա կատարեալպէս հնարաւոր
է և մինչև անգամ անհրաժեշտ է ամենից առաջ
Աւստրո-Սլոնագրիայում, ուր բնակվում են զա-
նազան ժողովուրդներ: Եւ այն հանգամանքը,
որ հարաւորեցան թագաւորութեան մէջ միշտ
դպրութիւն ունեն ազգային երկպառակութիւն-
ներ, պատճառ միայն կենտրոնական վարչու-
թիւն է, այն ինչ հաւասարութեան սկզբունքով
պէտք էր թող տալ իւրաքանչիւր ժողովրդին
ինքնուրոյն զարգացման կատարեալ ազատու-
թիւն: Դաշնակցութիւնը չի թուլացնի Աւստ-
րիան, ինչպէս որ նա չը թուլացնի Գերմանիան,
Շվեյցարիան և Միացեալ-Նահանգները: Բնդհա-
կառակը, նա աւելի կը զօրեղանի նրան, ար-
մատախիլ անելով ներքին ազգային կոխը»:

ՕՍԿԱՐ ԹԱՂԱՌՈՐԻ ՀԱՌԸ

Շվեդիայի Օսկար թագաւորը իր սպառնի մէջ
մի փառաւոր ընթերիք տուելի պատիւ ժուր-
նալիստների համաշխարհային ժողովին: Հնարված-
ները, թույլ 600 մարդ, գնացին ամբողջ չորս
չոգեհաւաքով: Երեկոյան 9 1/2 ժամին ամբո-
ցում ընթերք տրվեց, ուր թագաւորը առաջար-
կեց ժուրնալիստների կենաց բաժանի: Բերում
ենք այստեղ թագաւորի ձառը, որ նա արտա-
սանեց Ֆրանսիայի լեզուով:

«Պարոններ, ես անկեղծ կերպով և ուրախու-
թեամբ ողջունում եմ այսօր ինձ մօտ ժուր-
նալիստներին միջազգային համագումար ժողովի
անդամներին: Եւ կամենում եմ կրկին անգամ
իմ երախտագրութեան յայտնել կօնգրէսի
անդամների կողմից ինձ ցոյց տրված համակրու-
թեան նշանների համար: Համակրութեան այդ
նշանները մասնաւոր թանց են ինձ համար, որ
նրանք միաժամանակ վերաբերում են և իմ երկ-
րին: Մեր դպրում մասնուր անկասկած գրաւել
է աչքի ընկնող տեղը: Նա զօրեղ իշխանութիւն
ունի, և մինչև որ նա բարեխղճութեամբ կը
վերաբերվի իր վրա դրված պատասխանատու-
թեանը, նրան կարելի է բարեբարութիւն հա-
մարել մարդկութեան համար»:

Типографія Канцел. Главннач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.